

հաւատարիմ են իրենց բնիկ դաւանանքին, կը գնահատեն ազատութիւնը եւ քաղցր հանդարտութիւնը, զոր կը վայելեն մեր կայսերական շնորհով: Անոնք բրած են աւելի կենդանի ու զօրաւոր բողոքներ մեր Բարձրագոյն Գրան՝ մեզի տեղեկացնելով թէ մոլորեալ հայերէն ու մանք արդէն իրենց որդիքը զրկած են Պապական երկիրներ, չէր անոնք երդուեցին մեզի հանդէպ յարատեւ եւ անողոք պատերազմ մղելու, նման Մալթայի եւ ուրիշ ասպետներու, եւ (մահամտական) կրօնքը ջնջելու համար: (Այդ ծրագիրները եւ նպատակները ճշմարիտ կըրօնքի պաշտպան Աստուած պիտի ջնջէ): Այդ մոլորեալ հայերը ինքզինքնին իբր ֆրանկ ցոյց կուտան ու ոչ մեզի հպատակ, արդէն հրապարակաւ ֆրանկներու եկեղեցիները կ'այցելեն՝ աղքատացնելով իրենցմէ լքուած հայ եկեղեցիները: Անոնք օրական կը բազմանան: Շուտով զանազան հայ քահանաներ իրենց մեզ վճարած խաբանը տալու անկարող պիտի դառնան, եթէ մենք չարզիլենք այս մոլորեցումները ու այսօրինակ դասալքումները: Մենք, անոնց արդար բողոքը նկատի ունենալով եւ ցանկալով պաշտպանել հաւատարիմ հրատակները ու պատժել ապստամբները, արդէն հրամայեցինք Կ. Պոլսոյ մայրաքաղաքին մէջ, թէ այն հայերը, որոնք լատին եկեղեցիներէ ելած ատեննին կը ձերբակալուին, ինչպէս նաեւ հոն մտած ատեննին, պէտք է թիրառն զրկուին, իսկ անոնք, որ իրենց նախկին դաւանանքին չպիտի դառնան, այլ Պապին պիտի հետեւին յամառօրէն, պէտք է սպաննուին, մեր հրամանին հպատակիլ մերժելէ վերջ կամ թէ երբ շարունակեն իրենց ըմբոստութիւնը: Մենք ձեզի կը զրկենք այս վերին հրամանը՝ ձեզի այս անկանոնութեանց մասին իմացնելով եւ հրամայելով ձեզ արգիլել, ընդգիծանալ եւ զըսպել զիրենք, մեր կայսերական շնորհիւ ձեր ստացած բոլոր ուժով, եւ մեզի խաբան վճարող Հայոց, Ղպտիններու եւ Մարտիրոսներու եւ Յունաց եւ միւս բոլոր հա-

ւատարիմ հպատակներու տրտունջներուն եւ ցաւերուն ունկնդրելով, անոնց արդարութիւն ընելով, մասնաւոր խնամք տալով ամէն բանէ աւելի, որ մեղաւորները պատժելու երեւոյթին տակ դուք չիւրացնէք անոնց ինչքերը, կամ ապստամբներէն կաշտուիք անոնց մոլորութեան եւ հերձուածին համար, ձեր վրայ չհրաւիրելու համար մեր կայսերական զայրոյթը եւ անարդարութեան ու հալածանքի համար մեր իրաւացի պատիժէն չտառապիք: Տրուած է մեր մայրաքաղաքը Սէֆէր ամսայ 1-ին¹¹² (Հիմերթի)» 40):

Այս խիստ շահեկան եւ կարեւոր հրովարտական թուականն է Մայիս 24, 1705:

ՉՈՐՐՈՐԻ ՎԱԻԵՐԱԳԻՐ

Յուշագիր մը «Գլխաւոր պատճառները, որոնց համար Պարսկաստանի հայերը, սովորաբար Onesian յորջորջմամբ ծանօթ, հերձուածող կը նկատուին»:

«Անոնք կը մերժեն Սուրբ Հոգւոյն ծագումը Հօրմէն եւ Որդիէն, Արիանոսի հետ կարծելով, որ Որդին ծագած է միայն Հօրմէն»:

«Անոնք կը մերժեն երկու կատարեալ բնութիւն երկու կամքով Յիսուս Քրիստոսի մէջ, եւ կ'արտաքսն բոլոր հոռոմական կաթոլիկները, եւ ընդհանրապէս բոլոր անոնք, որ այդ դաւանանքին հակառակ կը հաւատան»:

«Անոնք կը հաստատեն, որ ան (Յիսուս) ուրիշներուն նման իբ կերած հացն ու միսը չմարսեց»:

«Թէ ան, զժողք իջնալով, ոչնչացուց սատանաները, փրկեց բոլոր անիծեալները, երկինք համբառնալէ վերջ աշխարհ եկաւ, եւ թովմաս առաքեալը Յիսուսը հնդիկ վաճառականներուն ծախեց կանխիկ զբամով»:

«Անոնք սուրբերու երջանկութիւնը կը մերժեն նախ քան վերջի դատաստանի